24
ՀՈՒՆՎԱՐԻ
2020

Luys Lnyu®



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ ԱՄՆ-ԻՐԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ ԱՄՆ-ԻՐԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԱՄՆ-ԻՐԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՓՈՒԼԸ 2

2. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱ 4

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԱՄՆ-ԻՐԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 7

3.1. Երկու երկրների հայկական համայնքների դերակատարությունը 8

3.2. Հայաստանի արձագանքը 8

3.3. Ռիսկերը Արցախի համար 10

4. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ 11

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Լույս» հիմնադրամը, ինչպես վայել է ցանկացած վերլուծական կենտրոնի, տարբեր կարևոր միջազգային իրադարձությունների առնչությամբ փորձում է Հայաստանում գտնել այն փորձագետներին, որոնք պատրաստ են իրենց կարծիքն ու վերլուծությունը ներկայացնել տվյալ իրադարձությունների վերաբերյալ: Նման քննարկման արդյունքում համադրելով միջդիսցիպլինար կամ նեղ մասնագիտություն ունեցող մասնագետների կարծիքները՝ հիմնադրամի փորձագետները փրձում են գտնել, թե Հայաստանի վրա այս կամ այն միջազգային իրադարձությունը ինչ ազդեցություն կարող է ունենալ: Սույն վերլուծական հոդվածը կազմված է ԱՄՆ-Իրան հակամարտության վերաբերյալ նմանօրինակ քննարկման հիման վրա:

ԱՄՆ-Իրան հակամարտության սրացումը գտնվում է աշխարհի տարբեր երկրների փորձագիտական հանրության ուշադրության կենտրոնում, և այս տեսանկյունից Հայաստանը չի կարող բացառություն լինել: Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության աշխարհագրական դիրքը, տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական իրադրությունը՝ ԱՄՆ-Իրան հակամարտության ցանկացած սրացում հայկական պետությունների համար մեծ ռիսկեր է պարունակում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ «Լույս» հիմնադրամը հունվարի 17-ին կազմակերպել է քննարկում, որի ընթացքում հրավիրված փորձագետները խոսել են ՀՀ անվտանգային օրակարգի մասին՝ ԱՄՆ-Իրան զարգացումների համատեքստում:

Քննարկմանը հրավիրվել էին Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Սուրեն Սարգսյանը և ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս Արտյոմ Տոնոյանը: Քննարկման ընթացքում հնչած տեսակետներն ու վերլուծությունները հնարավորություն են տալիս որոշակիորեն հասկանալ, թե ինչ է տեղի ունենում մեր հարևան երկրում և առհասարակ՝ տարածաշրջանում: Մասնավորապես, քննարկման մասնակիցները փորձել են պարզել, թե ո՞ր փուլում է գտնվում ԱՄՆ-Իրան հակամարտությունը՝ դեէսկալացիայի՞, թե՞ էսկալացիոն հերթական բարձրակետի հաղթահարման: Փորձել են նաև հասկանալ, թե հակամարտության ներկայիս գործընթացը ինչ ազդեցություն կարող է ունենալ երկու հակամարտող կողմերի ներքաղաքական օրակարգի վրա՝ հաշվի առնելով դրանց բավական բարդ բնույթը:

Քննարկման արդյունքում փորձ է արվել ստանալու Հայաստանի համար շատ կարևոր մի շարք հարցերի պատասխաններ: Մասնավորապես, քննարկվել է, թե

արդյո՞ք ԱՄՆ-ում կամ Իրանում հայկական համայնքները, լոբբին կարող են այս գործընթացում դիտվել որպես դերակատարներ: Փորձ է արվել հասկանալու, թե վերջին իրադարձությունների համատեքստում Հայաստանի ձեռնարկած քայլերը որքանով էին բավարար, արդյո՞ք դրանք ժամանակավրեպ էին, թե՞ ոչ, այդ քայլերն ու դիրքորոշումը որպես այդպիսին ընկալվեցի՞ն արդյոք երկու հակամարտող պետություններում, թե՞ աղճատված տեղ հասան: Քննարկման ժամանակ նաև ուշադրություն է հրավիրվել այն հարցին, թե ինչպես կարող է այս գործընթացն ազդել Արցախի վրա և վերջինս դրան ինչպիսի մասնակցություն պետք է ունենա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախը հակամարտող կողմերից մեկի փաստացի հարևանն է: Քննարկման վերջում փորձագետները ներկայացրել են հակամարտության գործընթացի զարգացման հնարավոր սցենարների մասին իրենց կանխատեսումը՝ Հայաստանի անվտանգային դիտակետից:

1. ԱՄՆ-ԻՐԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՓՈՒԼԸ

Քնարկման սկզբում փորձագետները նախ փորձեցին հիմնարար ձևով ներկայացնել իրենց տեսակետներն առ այն, թե ներկայումս որ փուլում է գտնվում ԱՄՆ-Իրան հակամարտությունը: Վերջին շրջանում հակամարտության էսկալացիոն բարձրակետի հաղթահարմանը զուգահեռ հայկական որոշ փորձագիտական շրջանակներ սկսեցին խոսել գործընթացի դեէսկալացիայի մասին, մինչդեռ իրավիճակի սխալ գնահատականը կարող է հանգեցնել զգոնության թուլացման: Հետևաբար, քննարկման մասնակիցները փորձեցին պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք հակամարտությունն այժմ գտնվում է դեէսկալացիայի փուլում, և որքանո՞վ է հնարավոր պնդել, որ այն տևական կլինի:

Ամերիկագետ Սուրեն Սարգսյանի կարծիքով գործընթացը մտել է ոչ թե դեէսկալացիոն փուլ, այլ էսկալացիայի փուլի բարձրակետի ավելի ստորին շեմ, որը կարելի է բնութագրել որպես շարունակվող էսկալացիա: Այսինքն, եթե մի բարձրակետը տեղի ունեցավ Սոլեյմանիի սպանությունից և դրա հետևանքով իրանական կողմից արձակված հրթիռների ամբողջ պատմությունից հետո, ապա այժմ բարձրակետը կարծես մի փոքր նվազել է, թեև երկու պետությունների հարաբերություններում լարվածությունը պահպանվում է, և ամենայն հավանականությամբ տեսանելի ապագայում կշարունակվի: Նա քիչ հավանական է համարում, որ առաջիկա ամիսների ընթացքում կողմերի միջև ուղղակի բանակցություններ սկսվեն միջուկային համաձայնագրի և այլ խնդիրների շուրջ, կամ ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցները հանվեն. ճիշտ հակառակը՝ ավելի հավանական է, որ պատժամիջոցները խորանան:

Անդրադառնալով պատժամիջոցների հնարավոր խորացմանը՝ Սարգսյանը նշեց, որ այդ համատեքստում կարևոր է հասկանալ, թե չնվազող, շարունակական էսկալացիան ուր է տանելու ոչ միայն երկու հակամարտող պետությունների հարաբերությունները, այլև ընդհանրապես տարածաշրջանը, ինչպես նաև ճիշտ պատկերացում կազմել Հայաստանի Հանրապետության անելիքների մասին: Փորձագետը հիշեցրեց, որ ԱՄՆ-Իրան հակասությունները միայն երկկողմ բնույթ չեն կրում, ունեն տարածաշրջանային լուրջ ազդեցություն՝ Մերձավոր Արևելքից մինչև Լիբիա, կարող են ազդել նաև համաշխարհային տնտեսության, նավթի գների վրա և այլն:

Ամերիկագետը հակամարտությունը բնութագրեց որպես երկու գերտերությունների միջև շատ գլոբալ առճակատում՝ մեկը տարածաշրջանային, մյուսը համաշխարհային գերտերություն: Այդուհանդերձ, նույն այդ համաշխարհային գերտերությունը դեռևս չի կարողանում Իրանի վրա այնքան ճնշում գործադրել, որպեսզի հասնի իր գերնպատակին՝ տարածաշրջանում փոխի Իրանի քաղաքականությունը: Սարգսյանի համոզմամբ այս պահին Միացյալ Նահանգների գերնպատակը ոչ թե Իրանում իշխանության փոփոխությունը կամ, ինչպես ամերիկացիներն են նշում, «ռեժիմի փոփոխությունն» է, այլ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում Իրանի իշխանության գործունեության կամ քաղաքականության փոփոխությունը:

Իրանագետ Արտյոմ Տոնոյանը նույնպես համաձայնեց այն տեսակետին, որ գործ ունենք ոչ թե դեէսկալացիայի, այլ պարզապես հակամարտության բարձրակետի փոքր-ինչ նվազման հետ: Ըստ նրա՝ ընդհանուր առմամբ հակամարտությունը 2020 թվականին շարունակվելու է և այլ սրացումներ էլ է ունենալու: Մասնավորապես, նա ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ կողմերից որևէ մեկը չի հասել իր նպատակին. ո՛չ ԱՄՆ-ն է լուծել իր առջև դրված խնդիրը, ո՛չ էլ Իրանն է հաղթահարել իր առջև ծառացած մարտահրավերը:

Տոնոյանը մանրամասնեց՝ նշելով, որ թեև ամերիկյան կողմից հայտարարում են Իրանում վարչակարգի կամ վերջինիս ընդհանուր մոտեցումների փոփոխության նպատակի մասին, սակայն այդ հարցում ամերիկացիները առայժմ չեն կարողանում հաջողության հասնել: Սրան զուգահեռ՝ ԱՄՆ-ում մոտենում են նախագահական ընտրությունները, ինչին Իրանում նույնպես անհամբեր սպասում են: Մյուս կողմից՝ ամերիկացիները Իրանի հետ չեն կարողանում համաձայնության հասնել միջուկային խնդրի հարցում: Տևական ժամանակ է, ինչ ամերիկյան կողմը փորձում է Իրանին բերել բանակցությունների սեղանին և հաջողության չի հասնում: Հետևաբար, եթե

կողմերից մեկի առջև դրված խնդիրն ու մյուսի առջև ծառացած մարտահրավերը առայժմ մնում են չլուծված, ապա պարզ է, որ լինելու են նոր սրացումներ:

Իրանագետը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ըստ էության՝ Իրանի դեմ տնտեսական պատժամիջոցները մի կողմից՝ ամերիկյան կողմին չեն տալիս ցանկալի արդյունք, ինչը հանգեցնում է ԱՄՆ կողմից նոր գործիքակազմի կիրառման (օրինակ՝ Սոլեյմանիի սպանությունը), մյուս կողմից՝ այդ պատժամիջոցները իրանական կողմի համար ստեղծել են բավական ծանր իրավիճակ: Արդյունքում, շատ հաճախ հակամարտող կողմերից նախահարձակ կողմը ոչ միշտ է լինում Միացյալ Նահանգները. օրինակ՝ ուշագրավ էր նախորդ տարի Պարսից ծոցում իրանական ուժերի կողմից ամերիկյան ԱԹՍ-ի խոցումը: Այս ուղղությամբ Իրանը դեռևս կիրականացնի որոշակի գործողություններ, որոնց մասին վերջին շաբաթների ընթացքում խոսում են ինչպես Իրանի խորհրդարանում, այնպես էլ պաշտոնական հայտարարությունների մակարդակով:

2. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱ

ԱՄՆ-Իրան հակամարտությունը չափազանց շատ է քննարկվում աշխարհաքաղաքական տրամաբանության մեջ, բայց այնքան էլ շատ չեն վերլուծությունները՝ կապված երկու երկրների ներքաղաքական օրակարգի հետ: Մինչդեռ գործ ունենք երկու բավական բարդ ներքաղաքական օրակարգերով երկրների հետ. ԱՄՆ-ում ընթացքի մեջ է իմպիչմենտի գործընթացը, Իրանում առկա են ցույցեր, որոնք այս շրջանում այդ երկրի համար այնքան էլ բնորոշ երևույթ չեն: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ փորձագետները իրենց դատողություններն արեցին այն մասին, թե հակամարտության ներկայիս գործընթացը ինչ ազդեցություն կարող է ունենալ երկու հակամարտող կողմերի ներքաղաքական օրակարգերի վրա:

Սուրեն Սարգսյանի կարծիքով՝ այս պահին երկու պետություններում էլ հակամարտությունը ներքաղաքական օրակարգի կարևորագույն հարցն է. չնայած Միացյալ Նահանգներն ունի նաև այլ մարտահրավերներ, սակայն առաջնային պլանում են գտնվում հենց Իրանի հետ լարված հարաբերությունները: Այս ուղղությամբ ԱՄՆ ներքաղաքական օրակարգում տեղի են ունենում որոշակի զարգացումներ. ԱՄՆ օրենսդիրը՝ Կոնգրեսը, նպատակ ունի Թրամփի լիազորությունները նվազեցնել արտաքին քաղաքականության ոլորտում՝ մասնավորապես հենց իրանյան քաղաքականության հարցում: Փորձագետը ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ այս նախաձեռնությամբ հանդես են գալիս դեմոկրատները, ովքեր

դեմոկրատ նախագահ Օբամայի իշխանության տարիներին վերջինիս լիազորությունները չէին սահմանափակում այս կամ այն պետության տարածքում, մասնավորապես՝ Սիրիայում կամ Իրաքում, գործողություններ իրականացնելու ժամանակ:

ԱՄՆ-ում ներքաղաքական գործընթացներից ամերիկագետը առանձնացրեց նաև նախագահ Թրամփի նկատմամբ իմպիչմենտի գործընթացը՝ հիշեցնելով, որ ընդամենը հունվարի 16-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը արդեն Թրամփի իմպիչմենտի (մեղադրական) նամակը ուղարկեց Սենատ՝ քննարկման և քվեարկության համար: Չնայած այս գործընթացում իրանական խնդիրը առկա չէ, և Իրանը չի հանդիսանում այս գործընթացի կողմ, այդուհանդերձ, հանրապետականների և դեմոկրատների միջև այս լարված փոխհարաբերությունները ԱՄՆ-ում կարծես պատմական բարձրակետի են հասել, որովհետև նախագահի իմպիչմենտ վերջին անգամ եղել է դեռ Բիլ Քլինթոնի դեմ: Ներկայիս փուլը նաև ԱՄՆ ներքաղաքական լարվածության բարձրակետերից մեկն է, իսկ Թրամփին իրանական քաղաքականության հարցում խանգարում են նաև հենց ներսում՝ համարելով, որ այսօր պետք չէ գնալ Իրանի հետ հակամարտության լարման:

Ըստ Սարգսյանի՝ ընդհանրապես, եթե հարց է ծագում ներքաղաքական գործընթացների մասին, միշտ պետք է հասկանալ, որ այն ամենը, ինչ անում է Թրամփը, դրա տողատակում նկատի է ունենում հենց վերընտրվելու հնարավորությունները: Այսինքն՝ ԱՄՆ իշխող վարչակարգը ցանկացած քայլ առաջին հերթին անում է վերընտրվելու շանսերը բարձրացնելու համար և փորձում է ձեռնպահ մնալ այդ շանսերը պակասեցնող գործողություններից: Իհարկե, երբեմն լինում են նաև ինքնաբուխ կայացրած որոշումներ և գործողություններ, որոնց հետևանքները դժվար է հաշվել. Սարգսյանը Սոլեյմանիի սպանությունը դասում է հենց այդպիսի քայլերի շարքին, որը իր կարծիքով՝ չհաշվարկված քայլ էր:

Համենայն դեպս, փորձագետը համոզված է, որ կողմերից յուրաքանչյուրի ներքաղաքական գործընթացները ազդում են նաև վերջիններիս արտաքին քաղաքականության վրա. ըստ նրա՝ Իրանում նույնպես սպասում են ԱՄՆ նախագահական ընտրություններին և հույս ունեն, որ Թրամփը չի վերընտրվի, որովհետև վերջինս ԱՄՆ պատմության ամենահիսրայելամետ նախագահն է: ԱՄՆ ոչ մի նախագահ ի աջակցություն Իսրայելի չի արել այնքան քայլեր, որքան Թրամփը՝ Երուսաղեմի, Գոլանի բարձրունքների ճանաչում, տարբեր հարցերում Իսրայելին անվերապահ աջակցություն և այլն: Բնականաբար իսրայելամետ նախագահի համար Իրանը դառնում է ամենակարևոր թիրախներից մեկը: Հաշվի առնելով այս ամենը՝

Սարգսյանը եզրակացնում է, որ կողմերի բոլոր քայլերը միտված են Թրամփի վերընտրվելու հարցին՝ Թրամփը աշխատում է ընտրվելու, իսկ Իրանը, դեմոկրատները և այլ տարբեր ուժեր՝ նրա չընտրվելու ուղղությամբ:

Իրանագետ Արտյոմ Տոնոյանի կարծիքով ԱՄՆ-Իրան հակամարտության սրացումը և առհասարակ երկու երկրների միջև գոյություն ունեցող հակամարտությունը որպես այդպիսին ուղղակիորեն ազդում է նաև Իրանի ներքաղաքական գործընթացների վրա: Ըստ նրա՝ «բարեփոխիչների» և վերջիններիս աջակցությունը վայելող քաղաքական կերպարի՝ Հասան Ռոհանիի վարկանիշը այժմ Իրանում անկում է ապրում: Իրանում կան փորձագետներ, որոնք կանխատեսում են, որ առաջիկայում տևական ժամանակ այլևս այդ երկրում իշխանության չեն գա բարեփոխիչները կամ բարեփոխական թևը: Տոնոյանը հիշեցրեց, որ միջուկային համաձայնագիրը կնքվել էր հենց Ռոհանիի թիմի անմիջական մասնակցությամբ ու նախաձեռնությամբ, սակայն ըստ էության՝ այն չտվեց ցանկալի արդյունքը, որին սպասում էին Իրանում:

Միաժամանակ Տոնոյանը ընդգծեց, որ միջուկային գործարքի հետ կապված խնդիրը հաճախ կախված չէ իրանական կողմի գործողություններից. 2017 թվականին ԱՄՆ-ում փոխվեց իշխանություն, քաղաքական ղեկավարությունը ստանձնեց Դոնալդ Թրամփը և այդ կետից սկսած՝ ԱՄՆ-Իրան հարաբերություններում ամեն ինչ սկսեց շրջվել: Այնուամենայնիվ, հենց առաջին օրվանից, երբ ԱՄՆ նախագահը հայտարարեց միջուկային համաձայնագրից դուրս գալու մասին, Իրանի նախագահը և նրա թիմը խորհրդարանում հայտնվեցին քննադատությունների թիրախում:

Իրանագետը ուշադրություն հրավիրեց Իրանում տեղի ունեցող մեկ այլ հետաքրքիր գործընթացի վրա, որը անմիջականորեն կապված է ԱՄՆ-Իրան հակամարտության հետ. ըստ էության՝ Իրանում տեղի է ունենում հոգևոր առաջնորդարանի ինստիտուտի թուլացման գործընթաց: Վերջին օրերին Իրանում փողոցային ակցիաների ժամանակ նկատվեց, որ քննադատության թիրախում է հայտնվել նաև Իրանի հոգևոր առաջնորդը: Տոնոյանը հիշեցրեց, որ հոգևոր առաջնորդի դեմ գործընթացները իրանական իրականության մեջ նորություն չեն, և նման դեպք տեղի էր ունեցել նաև Ահմադինեժադի կառավարման տարիներին, երբ նախագահն ինքն էր համարձակվել քննադատել հոգևոր առաջնորդին: Սակայն ըստ նրա՝ վերջին շրջանում այս գործընթացը մեծ թափ է հավաքում և փաստորեն թուլացնում է Իրանում հոգևոր առաջնորդի դիրքերը: Սրան զուգահեռ՝ Իրանում ակնհայտ է պահպանողականների դիրքերի ամրապնդման միտումը. այս գործընթացների արդյունքում փետրվարի 21-ին Իրանում սպասվող

խորհրդարանական ընտրություններում, ըստ իրանագետի, բավական մեծ տարբերությամբ իշխանության կգան պահպանողական ուժերը:

Տոնոյանը նշեց, որ թեև կան տեսակետներ, որ Իրանի բնակիչները ընդհանուր առմամբ վարչակարգից են հոգնած, սակայն ավելի օբյեկտիվ դատողությունները թույլ են տալիս նկատել, որ, այնուամենայնիվ, հակամարտության մակարդակում հակաամերիկյան տրամադրությունները գերակշռում են Իրանում: Այսինքն՝ անկախ ներքաղաքական իրավիճակում տեղի ունեցող փոփոխություններից՝ հակաամերիկյան տրամադրությունները Իրանի տարածքում չեն նվազում: Իրանում տեղի ունեցող փոքր ցույցերի ժամանակ որոշ մասնակիցների հնչեցրած այն պնդումները, թե իրենց թշնամին ներսում է և ոչ ԱՄՆ-ը, փորձագետը ընդհանուր առմամբ համարում է Իրանի տարածքում ոչ հանրաճանաչ տեսակետ:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԱՄՆ-ԻՐԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ինչպես արդեն նշվեց, ԱՄՆ-Իրան հակամարտության ցանկացած սրացում մեծ ռիսկեր է պարունակում ինչպես Հայաստանի և Արցախի, այնպես էլ Իրանի և ԱՄՆ-ի հայկական համայնքների համար, ուստի շատ կարևոր է այդ գործընթացի ժամանակ հայկական դերակատարների կողմից ճիշտ դիրքավորումը: Այս համատեքստում քննարկման մասնակիցները փորձեցին երեք ուղղություններով հարցերի պատասխաններ գտնել:

Առաջին հարցը վերաբերում էր նրան, թե արդյո՞ք ԱՄՆ-ում կամ Իրանում հայկական համայնքները և լոբբին հակամարտության ներկայիս գործընթացում կարող են որևիցե առումով դիտվել որպես դերակատարներ: Երկրորդ հարցի շրջանակներում փորձ է արվել հասկանալու, թե վերջին իրադարձությունների համատեքստում Հայաստանի ձեռնարկված քայլերը որքանով էին բավարար, արդյո՞ք դրանք ժամանակավրեպ էին, թե՞ ոչ, այդ քայլերն ու դիրքորոշումը որպես այդպիսին ընկալվեցի՞ն արդյոք երկու հակամարտող պետություններում, թե՞ դրանք աղճատված տեղ հասան: Երրորդ հարցի շրջանակներում փորձագետները փորձեցին պարզել, թե ինչպես կարող է այս գործընթացն ազդել Արցախի վրա, և վերջինս դրանում ինչպիսի մասնակցություն պետք է ունենա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախը հանդիսանում է հակամարտող կողմերից մեկի փաստացի հարևանը:

3.1. Երկու երկրների հայկական համայնքների դերակատարությունը

Ամերիկագետ Սուրեն Սարգսյանի կարծիքով՝ հակամարտության գործընթացում հայ լոբբիստների ու համայնքների անելիքները և հնարավորությունները մեծ հաշվով շատ փոքր են: Ըստ նրա՝ նախ Հայաստանը պետք է հասկանար իր շահը, ապա նաև այդ լոբիստները աշխատեին այդ շահը առաջ տանելու համար, իսկ հայկական շահը Սարգսյանը համարում է առճակատման բացակայությունը: Այսինքն՝ հայկական կողմի առավելագույն նպատակը պետք է լինի այն, որ այս երկու պետությունների հարաբերությունները չլարվեն, որովհետև ցանկացած տեսակի լարում ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենալու նաև Հայաստանի Հանրապետության վրա:

Խոսելով ստեղծված իրավիճակում իրանահայ համայնքի անելիքների մասին՝ իրանագետ Արտյոմ Տոնոյանը նշեց, որ ըստ էության Իրանի հայկական համայնքը այս գործընթացի վրա ոչ մի էական ազդեցություն չի կարող ունենալ: Ըստ նրա՝ ընդհանուր առմամբ ցանկալի կլիներ, որ իրանահայ համայնքի այն ներկայացուցիչները, ովքեր այժմ Իրանից դուրս են բնակվում և օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարբեր պատճառներով դժգոհ են Իրանում գործող վարչակարգից, իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը չօգտագործեն Հայաստանում հակաիրանական կոչեր անելու նպատակով և չփորձեն Հայաստանին մղել կողմնակալ դիրքորոշման: Նա նշեց, որ ինքը հաճախ հանդիպել է նմանօրինակ որոշ գրառումների, ինչը համարում է ոչ նպատակահարմար:

Ըստ էության, երկու փորձագետներն էլ համակարծիք են, որ ԱՄՆ-Իրան հակամարտության սրման ժամանակահատվածում երկու երկրների հայկական համայնքներն ու լոբիստական կազմակերպությունները մեծ հաշվով անելիք չունեն և պետք է հնարավորինս զերծ մնան կողմնակալ գործողություններից:

3.2. Հայաստանի արձագանքը

Անդրադառնալով Հայաստանի համար հակամարտության գործընթացի հնարավոր հետևանքներին՝ Սուրեն Սարգսյանը նշեց, որ այն արդեն իսկ որոշակի բացասական ազդեցություն է ունենում: Հայ-իրանական առևտրաշրջանառությունը տարեկան մոտ 300-400 մլն ԱՄՆ դոլարի սահմաններում է, որի հիմնական մասը էլեկտրոէներգիան և գազն են. եթե ԱՄՆ վարչակազմը որոշի, որ պետք է պատժամիջոցները կիրառվեն նաև այս ոլորտներում, սա ուղղակի լրջագույն հարված կլինի Հայաստանի տնտեսության համար: Հայաստանը կարող է տուժել, ինչպես դա եղավ ամերիկյան պատժամիջոցների հետևանքով իրանական «Մահանէյր» ավիաընկերության դեպի Երևան չվերթերի դադարեցման, Հայաստանում իրանական «Մելլաթ» բանկի գործունեության դադարեցման ժամանակ: Ընդհանրապես, սրանք

Հայաստանում բացառիկ դեպքեր էին, երբ երկրում գործունեություն ծավալող գրանցված երկու կազմակերպություններ ընկան ամերիկյան պատժամիջոցների ցուցակի տակ: Սարգսյանի կարծիքով՝ նման իրավիճակներից խուսափելու համար՝ Հայաստանի շահերից է բխում այս երկու պետությունների առճակատման բացառումը, ինչը սակայն մեր ուժերից վեր է, որովհետև հակամարտության շրջանակներում բախվում են մի շարք գերտերությունների շահեր:

Անդրադառնալով ստեղծված իրավիճակում Հայաստանի անելիքներին՝ Սարգսյանը նշեց, որ Հայաստանը մեծ հաշվով ոչինչ էլ անել չէր կարող, այստեղից եղած արձագանքներն ու հայտարարություններն այնպիսին էին, ինչպիսին և պետք է լինեին: Միևնույն ժամանակ նա իր զարմանքը հայտնեց ՀՀ ԱԽ քարտուղարի հնչեցրած այն հայտարարության կապակցությամբ, որ Հայաստանը կարող է դառնալ Իրանի և ԱՄՆ-ի միջև բանակցություններ կազմակերպող կամ միջնորդ: Նա այդ հայտարարությունը բնութագրեց որպես շատ զարմանալի և առնվազն զվարճալի՝ հիշեցնելով, որ նման հայտարարություններով հանդես են եկել այնպիսի գերտերություններ, ինչպիսիք են Թուրքիան, Չինաստանը և Ռուսաստանը: Ամերիկագետի կարծիքով՝ ստեղծված իրավիճակում մենք ոչինչ չունենք անելու, քան պարզապես պատրաստ լինելու զարգացման ցանկացած՝ նույնիսկ ամենանվազ հավանական սցենարի:

Արտյոմ Տոնոյանը համաձայնեց այն տեսակետին, որ ընդհանուր առմամբ հայկական կողմից արվեց այն, ինչ պետք է արվեր, այնուամենայնիվ ըստ նրա կային որոշ նրբություններ, որոնք կարելի էր քննարկել տարբեր հարթակներում: Խոսքը վերաբերում է նախ ԱԳՆ-ի արձագանքին: Տոնոյանը դրական համարեց, որ ԱԳՆ-ը ի վերջո արձագանքեց և ցավակցեց Սոլեյմանիի սպանության կապակցությամբ, սակայն նշեց, որ մինչ ցավակցական այդ տեքստի հրապարակումը հիմնականում հանդիպում էին քննարկումներ, որոնց տրամաբանությունը հետևյալն էր՝ պե՞տք է արդյոք ցավակցել, թե՞ ոչ:

Միաժամանակ փորձագետը մտահոգություն հայտնեց այն կապակցությամբ, որ ցավակցությունը ԱԳՆ կողմից տարածվել է ուշացումով՝ Ադրբեջանի կողմից նման հայտարարություն հրապարակվելուց հետո: Ըստ նրա՝ տարօրինակ է, որ ՀՀ ԱԳՆ-ն նախ փորձեց հասկանալ, թե ինչպես է դիրքավորվում Ադրբեջանը, այնուհետև արձագանքեց: Նույն տրամաբանությամբ՝ Հայաստանի արտգործնախարարը իր իրանցի գործընկերոջ հետ հեռախոսազրույց ունեցավ միայն Ադրբեջանի ԱԳՆ-ի նման հեռախոսազրույցից հետո՝ հայտարարելով, որ այն տեղի է ունեցել իրանական կողմի

նախաձեռնությամբ: Իրանագետի կարծիքով՝ ՀՀ իշխանությունների գործողությունների տրամաբանությունը դեռ հարկավոր է հասկանալ:

3.3. Ռիսկերը Արցախի համար

Անդրադառնալով ստեղծված իրավիճակում Արցախի համար ի հայտ եկած ռիսկերին՝ Սուրեն Սարգսյանը նշեց, որ Ադրբեջանը ցանկացած հարմար պահ օգտագործելու է իրավիճակի էսկալացիայի կամ ինչ-որ նոր արկածախնդրության համար, և ԱՄՆ-Իրան հնարավոր բախումը նույնպես պետք է դիտարկել այդ համատեքստում: Ըստ նրա՝ Միացյալ Նահանգների դիրքորոշումը Արցախի հակամարտության վերաբերյալ այն է, որ հարկավոր է խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով և շատ արագ, ընդ որում՝ ամերիկյան կողմի համար այնքան էլ կարևոր չէ, թէ ինչ սկզբունքներով պետք լուծել հակամարտությունը՝ տարածքային ամբողջականության, թե ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա: ԱՄՆ-ի համար այս տարածաշրջանում խնդիրը Իրանն է, և երբ Իրանի հարևանությամբ ռազմական գործողություններ են իրականացվում, շատ ոլորտներում նրանք կորցնում են վերահսկողությունը՝ մասնավորապես տարածաշրջանում զենքի շրջանառության նկատմամբ: Սա ԱՄՆ-ի համար գլխացավանք է, ուստի գոնե այս փուլում վերջինս ցանկանում է բացառել այդ սցենարը:

Սարգսյանը կարևորեց նաև Ադրբեջանի ներքաղաքական գործընթացները. այնտեղ շուտով անցկացվելու են խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում չի բացառվում նոր իշխանության ձևավորումը: Այս համատեքստում նա ուշադրություն հրավիրեց Մեհրիբան Ալիևայի վերջին շրջանի ակտիվության և նրա միջազգային ճանապարհորդությունների վրա՝ նշելով, որ տեղեկություններ ունի վերջինիս Վաշինգտոն այցի նախապատրաստման մասին, ինչը կլինի Փարիզ և Մոսկվա այցերի տրամաբանական շարունակությունը: Ամերիկագետը հույս հայտնեց, որ Հայաստանի համապատասխան ինստիտուտները հաշվի են առնում վերոհիշյալ բոլոր հանգամանքները, կատարում են ուսումնասիրություններ և պատրաստ են ժամանակին բոլոր վերլուծությունները տրամադրել երկրի ղեկավարությանը:

Իրանագետ Արտյոմ Տոնոյանը հիշեցրեց, որ Արցախը 132 կիլոմետրանոց սահման ունի Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ շատ ավելի երկար, քան ՀՀ-Իրան սահմանն է: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, որի սահմանը Իրանի հետ հսկում է ռուսական կողմը, Արցախի հետ սահմանը վերահսկվում է հայկական կողմից, և այդ սահմանի անվտանգության համար առաջին հերթին պատասխանատու է հայկական կողմը: Այս առումով, Արցախի

Հանրապետությանը անընդհատ կրավորական, պասիվ դիրքորոշման մղելը, ըստ Տոնոյանի, ամենևին ճիշտ չէ: Նրա համոզմամբ պետք է կատարել դերերի որոշակի վերաբաշխում և հասկանալ, թե որտեղ է ի վերջո Արցախի Հանրապետության ազգային շահը կամ առհասարակ հայկական կողմի ազգային-անվտանգային շահը:

Տոնոյանը նաև անդրադարձավ վերջին օրերին հաճախակի դարձած այն խոսակցություններին, որ ի վերջո ԱՄՆ-ը պետական բյուջեի մակարդակով հատկացումներ է անում Արցախում ականազերծման աշխատանքների նպատակով, կամ որ կազմակերպվել է Արցախի նախագահի այցը ԱՄՆ, հանդիպումները տարբեր կոնգրեսականների հետ: Այս համատեքստում իրանագետը հիշեցրեց, որ ԻԻՀ-ը այն երկիրն է, որտեղ Հասան Ռոհանիի քաղաքական թիմի հովանավորության ներքո գործող շատ հեղինակավոր «Շարդ» օրաթերթում հրապարակվեց Արցախի Հանրապետության ԱԳՆ-ի հետաքրքիր հարցազրույցը, որտեղ անմիջականորեն օգտագործվեց Արցախի Հանրապետություն եզրը, ինչը Իրանի ու Ադրբեջանի միջև դիվանագիտական լարվածության պատճառ դարձավ: Ուստի, Տոնոյանն առաջարկեց նախ հասկանալ, թե արդյո՞ք տեղին են Արցախին պասիվության կամ չարձագանքելու կոչեր անելը:

4. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ

Ինչպես նշվեց, հայկական պետությունների համար շատ կարևոր է հասկանալ ԱՄՆ-Իրան հակամարտության զարգացման տարբեր սցենարները և պատրաստ լինել դրանցից յուրաքանչյուրին: Քննարկման վերջում փորձագետները ներկայացրին հակամարտության գործընթացի զարգացման հնարավոր սցենարների վերաբերյալ իրենց կանխատեսումները՝ Հայաստանի անվտանգային շահերի տեսանկյունից:

Անդրադառնալով հակամարտության հետագա զարգացմանը՝ Սուրեն Սարգսյանը նշեց, որ նախ տեղի ունեցող գործընթացներին պետք է նայել Հայաստանի տեսանկյունից՝ «երևանյան հայացքով», տեսնել, թե ինչ խնդիրներ կան և ինչ սպառնալիքներ կարող են ծագել: Ըստ նրա՝ առճակատումը ամենաբացասական ու կործանարար հետևանքներն է ունենալու ամբողջ տարածաշրջանի վրա և լուրջ ազդեցություն է ունենալու նաև Հայաստանի վրա: Այս տեսանկյունից փորձագետը նորից կարևորեց բոլոր, նույնիսկ քիչ հավանական սցենարներին պատրաստ լինելու անհրաժեշտությունը:

Ստեղծված իրավիճակի առնչությամբ Սարգսյանը նշեց, որ մոտ ապագայում՝ առնվազն առաջիկա 2-3 ամիսների ընթացքում, բանակցություններ չեն լինի: Ըստ

նրա՝ իրանական կողմը Թրամփին հնարավորություն չի տա, որպեսզի վերջինս իր նախընտրական քարոզարշավի ժամանակ Իրանի հետ բանակցությունները օգտագործի որպես ձեռքբերում: Քանի որ Իրանի համար Թրամփի վերընտրվելու բացառումը ամենակարևոր օրակարգային հարցն է այսօր, Սարգսյանը չբացառեց, որ իրանական կողմը կարող է որոշակի գործողություններ անել, որպեսզի խանգարի Թրամփի վերընտրվելուն: Մասնավորապես, իր կարծիքով Թրամփի վերընտրվելուն այսօր կարող է երկու հանգամանք խանգարել՝ ԱՄՆ տնտեսության անկումը և անլուծելի խնդիրները Իրանի հետ: Սարգսյանը առաջարկեց նաև հաշվի առնել Ջիմի Քարթերի բացասական փորձը. նա չվերընտրվեց, որովհետև ամբողջությամբ տապալեց իրանական քաղաքականությունը:

Միաժամանակ, ԱՄՆ-ի համար չափազանց բացասական երևույթ է, երբ երկիր են բերվում զոհված զինծառայողներ, ուստի ամերիկագետ Սարգսյանի կարծիքով նման սցենարը կնշանակի Թրամփի վարկանիշի անկում և կբերի վերընտրվելու հնարավորության նվազման: Ըստ նրա՝ սա հասկանում է նաև Իրանը, հետևաբար առաջիկայում չի խաղա այն պարտիայով, որով ցանկանում է խաղալ Թրամփը:

Թրամփը առաջարկում է բանակցություններ, մինչդեռ Իրանը պատրաստ չէ բանակցությունների. ընդհանրապես, Սարգսյանի կարծիքով այս առումով Իրանը բավական ճիշտ է դիրքավորվել՝ նշելով, որ արդեն իսկ բանակցել է Թրամփի իրավանախորդի հետ, մինչդեռ վերջինս այլ պայմաններով նոր բանակցություններ է ուզում սկսել: Իրանը ելնում է այն սկզբունքից, որ ԱՄՆ-ը պետություն է, և Իրանը բանակցել է պետության հետ: Իրանի դիրքորոշումը տրամաբանական է նաև այն տեսանկյունից, որ Միջուկային համաձայնագրից միակողմանիորեն դուրս է եկել Թրամփը, այն պարագայում, երբ այդ համաձայնագիրը ստորագրվել է նաև այլ պետությունների կողմից:

Ի վերջո Սարգսյանը եզրակացնում է, որ մոտ ապագայում կողմերի միջև բանակցություններ չեն լինի. լարվածությունը կմնա և ԱՄՆ նախագահի ընտրություններում Թրամփի նախընտրական պայքարի հիմնական պատասխանատուները կփորձեն օգտագործել այն՝ որպես լուրջ մարտահրավեր, որը կարող է լուծել միայն Թրամփը: Ինչ վերաբերում է Իրանին, նրա կարծիքով վերջինս պետք է փորձի իր գործողություններով ամեն ինչ անել, որպեսզի Թրամփի վերընտրվելու հեռանկարները հնարավորինս մշուշոտ դարձնի:

Իրանագետ Արտյոմ Տոնոյանը կարևորեց ԱՄՆ-ում սպասվող նախագահական ընտրությունների արդյունքները. արդյո՞ք Թրամփը կվերընտրվի, թե՞ ոչ՝ մեծ մասամբ

կախված է այն բանից, թե քաղաքական առումով ինչ փոփոխություններ տեղի կունենան Իրանում: Նրա կարծիքով՝ Իրանում ամեն դեպքում տեղի կունենա քաղաքական փոփոխություն, պարզապես այստեղ խնդիրը արագության մեջ է՝ թե ինչպիսի արագությամբ տեղի կունենան այդ փոփոխությունները: Եթե Թրամփը վերընտրվի, ապա այդ փոփոխությունները շատ ավելի արագ կիրականացվեն, որովհետև Իրանում արդեն երեք տարուց ավելի սպասում են այդ ընտրություններին, տնտեսական առումով դիմանում են և փորձում են ներքաղաքական կյանքը կազմակերպել մոտավորապես այս ընտրությունների հաշվարկով:

Տոնոյանը նշեց, որ Իրանում կան մասնագետներ, քաղաքական վերլուծաբաններ, ովքեր այն կարծիքին են, որ Իրանը աստիճանաբար գնալու է այսպես կոչված «սպիտակ հեղափոխության» ճանապարհով՝ հոգևոր առաջնորդարանի ինստիտուտում փոփոխություններ կատարելու, ազատականացման, քաղաքացիներին ավելի մեծ ազատություններ տալու և իսլամական բաղադրիչը նվազեցնելու միջոցով: Նրանց կարծիքով՝ սա հարկավոր է, որպեսզի երկիրը գոնե կարողանա ներքաղաքական կյանքը այնպես կազմակերպել, որ տնտեսական պատժամիջոցները չբերեն ԻԻՀ խորքային ցնցումների:

Իրանագետը համաձայնեց այն մտքին, որ Իրանը անպայման իրականացնելու է գործողություններ, որոնք Միացյալ Նահանգներում շատ զգայուն են՝ հատկապես կապված ամերիկացի զինվորականների սպանությունների հետ: Նա նշեց, որ վերջերս իրանական լրատվամիջոցները, հղում կատարելով ամերիկյան ԶԼՄ-ներին, հաղորդում էին, որ Իրաքում ամերիկյան ռազմաբազայի հրթիռակոծության արդյունքում կան սպանված ամերիկացի զինվորականներ. անգամ շրջանառվում է տեսահեռարձակում, ըստ որի ամերիկացի ծնողը հայտնում է, թե Իրաքում ծառայող իր որդուց մոտավորապես մեկ շաբաթ տեղեկություն չի ստացել և համարում է, որ իր որդին սպանվել է ամերիկյան ռազմաբազայի վրա իրանական կողմի հարձակման ժամանակ: Փորձագետի կարծիքով՝ ԱՄՆ ներքաղաքական զարգացումների վրա ազդեցության առումով Իրանը գործողությունների բավական լայն հնարավորություն ունի և դրանք կօգտագործի ԱՄՆ-ում նախընտրական փուլում: Որքան մոտենան ԱՄՆ նախագահական ընտրությունները, այնքան Իրանն ավելի հաճախ է օգտագործելու իր ակտիվում առկա այդ գործիքակազմը:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

Հայաստանի անվտանգային օրակարգը ԱՄՆ - Իրան զարգացումների համատեքստում 17.01.2020

https://www.youtube.com/watch?v=GWaAHeeFaLM
(այցելվել է 21.01.2020թ.):

Հեղինակներ՝

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն՝ Սուրեն Սարգսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս՝ Արտյոմ Տոնոյան
«Լույս» հիմնադրամի արտաքին քաղաքականության
և անվտանգության հարցերով փորձագետ՝ Դերենիկ Խաչատրյան

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*